Լեհաստանում ՀՀ դեսպան Սամվել Մկրտչյանի հարցազրույցը «Warsaw Institute Review» ամսագրին

Հարց. Ինչու՞ հակամարտությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև կրկին բռնկվեց վերջին օրերին:

Սամվել Մկրտչյան. Առկա է բավականին հստակ վկայություն, որ իրավիճակի ամենավերջին սրացումը հայ-ադրբեջանական սահմանին Տավուշի հյուսիսային մարզում Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության տրամաբանական հետևանքն էր: Եթե հետևենք Ադրբեջանի նախագահի, պաշտպանության նախարարի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների վերջին շաբաթների և ամիսների պատերազմ հրահրող հռետորաբանությանը, որով նրանք հանդես են գալիս հօգուտ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական լուծման, ապա կտեսնենք, որ հուլիսի 12-ից սկսված իրադարձություններին մղող սադրանքը պատահական չէր: Հայկական կողմը շարունակաբար զգուշացնում էր իր միջազգային գործընկերներին նման իրավիճակի բարձր հավանականության և Ադրբեջանի չարամիտ մտադրությունների եռանդի ու դրանք սանձահարելու քաղաքական ու դիվանագիտական քայլերի անհրաժեշտության վերաբերյալ: Սակայն, ի հիասթափություն հայկական կողմի, մեր նախազգուշացումներն անտեսվեցին:

Հարց. Արդյո՞ք վերջին բախումների պատճառները նման են 1988թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի դրդապատճառներին:

Սամվել Մկրտչյան. Կարող են լինել որոշակի նմանություններ: 1988թ. հակամարտությունը սկսվեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի՝ հանուն խաղաղ ինքնորոշման իրավունքի շարժումը կոպիտ ռազմական ուժով ճնշելու փորձից: Այն ժամանակ ադրբեջանցիները տպավորիչ կերպով տապալվեցին: Դասեր քաղելու փոխարեն, ցավոք սրտի, ադրբեջանական ղեկավարությունն այժմ կեղծ պատմական տարածքային պահանջներ է առաջադրում նաև Հայաստանին: Դա համապատասխանում է Ադրբեջանի երկար պատմություն ունեցող այն պնդմանը, որ հակամարտությունը միշտ եղել է Հայաստանի և Ադրբեջանի միջև և Լեռնային Ղարաբաղը՝ իր օրինական ընտրված իշխանություններով, առանձին դերակատարություն չունի: Նման մոտեցումը և վարքը որևէ հիմնավորում չունեն և ավելի են հեռացնում ԼՂ հակամարտության խաղաղ և բանակցային լուծում գտնելու հնարավորությունները, ինչը հայկական կողմերի և միջազգային հանրության համար ընդունելի միակ կենսունակ տարբերակն է:

Հարց. Որո՞նք են Թուրքիայի և Ռուսաստանի դերակատարությունները Կովկասում և ինչպե՞ս են դրանք ազդում վերջին օրերի իրավիճակի վրա:

Սամվել Մկրտչյան. Երկու երկրները գործում են բացարձակապես տարբեր կերպով: Թուրքիայի պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, նախագահը և այլ պաշտոնյաներ, անցած շաբաթվա ընթացքում արդեն իսկ արել են մի շարք հայտարարություններ և մեկնաբանություններ՝ արտահայտելով իրենց աներկբա աջակցությունը Ադրբեջանին, այդ թվում և հավանական ռազմական ներգրավմամբ: Սա ծայրահեղ վնասակար է և ոչ միայն քաջալերում է Ադրբեջանին

շարունակելու ընթանալ սրացման վտանգավոր ուղով, այլև առաջ է բերում հիմնարար հարցադրումներ, թե արդյոք այդ երկիրը կարող է որևէ վստահելի և դրական դեր խաղալ Հարավային Կովկասում: Այս պահին առավել քան հստակ է, որ Թուրքիան ապակայունացնող գործոն է մեր տարածաշրջանում և լուրջ մարտահրավեր Հայաստանի անվտանգությանը: Ավելին, Թուրքիայի փորձերը՝ միջամտելու հարևան այլ տարածաշրջաններում ընթացող հակամարտություններին արդեն իսկ խարխլել են անվտանգությունն ու կայունությունն այնտեղ:

Այս փաստերն ավելի անհնար են դարձնում Թուրքիայի որևէ դերակատարությունը՝ միջազգային և հատկապես ԵԱՀԿ շրջանակներում, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված: Հայաստանը կշարունակի հետևողականորեն աշխատել միջազգային և տարածաշրջանային անվտանգությունը պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով իր միջազգային գործընկերների հետ:

Ի տարբերություն Թուրքիայի, Ռուսաստանը՝ լինելով Հայաստանի դաշնակիցը և կրելով ռազմական անվտանգության համաձայնագրերի պարտավորությունները, ընտրեց առավել հավասարակշիռ մոտեցում և առաջարկեց իր միջնորդական ծառայությունները ոչ միայն որպես Մինսկի խմբի համանախագահ, այլև ազգային կարգավիճակով:

Հարց. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեն երկու երկրները Բաքու-Երևան հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Սամվել Մկրտչյան. Ներկայիս իրավիճակը պահանջում է հնարավորինս արագ ներգրավվում բանակցություններում՝ հիմնված բարի կամքի վրա: Ադրբեջանը պետք է վերջապես ըմբռնի, որ մենք ապրում ենք նույն տարածաշրջանում և կարիք ունենք կառուցելու ընդհանուր անվտանգության տարածք: Այդ նպատակին հասնելու համար, առաջին հերթին, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը պետք է առանց նախապայմանների հարգվի, միջազգային իրավականորեն պարտադիր մեխանիզմները պետք է գործի դրվեն այդ իրավունքի իրականացման և ԼՂ կարգավիճակի որոշման համար: Այդ պարագայում Հարավային Կովկասի ողջ ներուժը կիրացվի, որից հավասարապես կշահենք բոլորս:

Հարց. Կցանկանայի՞ք, որ միջազգային կազմակերպությունների ներգրավվեին խաղաղության գործընթացում:

Սամվել Մկրտչյան. Մենք, ինչպես և միջազգային հանրության մեծամասնությունը, հայտարարել ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը՝ Ֆրանսիան, Միացյալ Նահանգները և Ռուսաստանը, միակ միջազգայնորեն ճանաչված ձևաչափն է՝ միջնորդելու ԼՂ հակամարտության հարատև կարգավորման հասնելուն ուղղված խաղաղ բանակցությունները: Ցանկացած այլ սատարող ներգրավում միջազգային կազմակերպությունների կողմից պետք է սերտորեն համադրվի և խորհրդակցվի համանախագահների հետ: Ցավոք սրտի, մենք անցյալում ականատես ենք եղել այն իրողությանը, որ այլ մոտեցման պարագայում, հաճախ, եթե ոչ միտումնավոր, ապա

նույնիսկ առանց դիտավորության, դա կարող է ավելի վնասել, քան օգտակար լինել խաղաղ գործընթացին:

Հարց. 2016թ. ի վեր, երկու կողմերը հայտարարել են միմյանց ենթակառուցվածքների վրա կիբերհարձակումների մասին: Կարծու՞մ եք, որ դա դեռ սպառնալիք է Հայաստանի անվտանգությանը: Ինչպե՞ս է հայկական կողմը պաշտպանվում կիբերհարձակումներից: Արդյո՞ք կիբերանվտանգությունը կարևոր առաջնահերթություն է ներկա իշխանությունների համար:

Սամվել Մկրտչյան. Հայաստանը միայնակ չէ: Համարյա բոլոր երկրները դարձել են խոցելի կիբերսպառնալիքների և իրական կիբերհարձակումների համար: Նոր որակումներ են դրվել շրջանառության մեջ, ինչպիսիք են կիբեր պատերազմ, խառնածին պատերազմ: Խիստ մտահոգիչ է այն, որ կիբերսպառնալիքները ապագայում ավելի աճելու են՝ դրա հետ միասին նաև նման հարձակումների քայքայիչ ուժը: Հայաստանի վրա այդպիսի հարձակումների հիմնական աղբյուրը մեր հարևան Ադրբեջանն է: Նրանք այդ նպատակով աշխատեցնում են ցանցահենների հատուկ խմբեր և բացահայտ կերպով ներկայացնում հայկական կայքերի թափանցումները: Իհարկե, մենք շատ բան ենք անում մեզ կիբերտարածքում պաշտպանելու համար՝ կառուցելով պաշտպանական համակարգեր և բարդ համակարգչային ցանցեր: Միաժամանակ, մենք կարծում ենք, որ, որպես միջազգային հանրություն, մենք պետք է մեկտեղի գանք և մշակենք կիբեր տարածքի համար վարքի կանոնակարգ: Այլապես, մենք ապրելու ենք շատ վտանգավոր և անկանխատեսելի աշխարհում:

Հարց. Արդյո՞ք Հայաստանը եղել է ապատեղեկատվության արշավների թիրախ և ներսում և դրսում: Ի՞նչ է հատկապես տեղի ունեցել: Ինչպե՞ս կարելի է պայքարել այդ վտանգի դեմ :

Սամվել Մկրտչյան. Ապատեղեկատվությունը, կեղծ լուրերը, առավել լայն որակմամբ ինֆոդեմիան, դարձել է մեր առօրյա կյանքի մասը՝ ցանկանանք դա, թե ոչ: Դա միշտ եղել է, սակայն թվային դարաշրջանի, սոցիալական ցանցերի նոր իրողությունների պայմաններում այդ երևույթը և նրա կազմաքանդիչ ազդեցությունն աճել են երկրաչափորեն: Բնականաբար, մենք բոլորս ազդվում ենք դրանից: Ի՞նչ կարելի է անել հակազդելու և նվազեցնելու վնասը: Ակնհայտորեն, առավել արդյունավետ գործելաոճը պետք է լինի եռանդորեն և անխոնջ կերպով առաջարկելու ճշմարիտ և օբյեկտիվ տեղեկատվություն, բացահայտելու ապատեղեկատվության ետևում կանգնածների իրական շարժառիթները, կրթելու հանրությանը՝ լինել ավելի «մեդիա գրագետ» և հմուտ՝ տարբերակելու ճշմարտությունը ստից: